ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր քաղաքում են ընդունել օզոնային շերտը պաշտպանելու արձանագրությունը։**

1) Սիդնեյ
2) Մոնրեալ
3) Դուբլին
4) Կոպենհագեն

2 **Ավստրալիայում թեթև արդյունաբերությունը առավելապես ինչի՞ վրա է հիմնված։**

1) վուշ
2) բուրդ
3) բամբակ
4) կաուչուկ

3 **Աֆրիկայում ո՞րը միապետություն չէ.**

1) Լեսոտո
2) Մոզամբիկ
3) Մարոկկո
4) Սվազիլենդ

4 **Ո՞ր կլիմայական գոտին *չի* ներառում ԱՄՆ տարածքը։**

1) բարեխառն
2) մերձարևադարձային
3) արևադարձային
4) մերձհասարակածային

5 **Մարակաիբո ծոցը ո՞ր պետության տարածքում է գտնվում։**

1) Վենեսուելա
2) Էկվադոր
3) Արգենտինա
4) Բոլիվիա

6 **Ո՞րը Ասիայի լճերից չէ.**

1) Սևան
2) Վան
3) Բայկալ
4) Չադ

7 **Աշխարհի բնակչության քանի՞ տոկոսն է ապրում Ասիայում:**

1) 60%
2) 50%
3) 40%
4) 30%

8 **Ասիական ո՞ր երկիրը *չունի* տնտեսական զարգացման ցածր ցուցանիշ:**

1) Աֆղանստան
2) Մյանմա
3) Մոնղոլիա
4) Բահրեյն

9 **Չինաստանը արտադրում է համաշխարհային գյուղատնտեսական արտադրանքի**

1) 1/2-ը
2) 1/3-ը
3) 1/4-ը
4) 1/5-ը

10 **Ո՞ր լեզվաընտանիքի մեջ է մտնում վրացերենը:**

1) հնդեվրոպական
2) չին-տիբեթական
3) ալթայան
4) կովկասյան

11 **Ո՞ր երկրի տարածքավ *չի* անցնում Դանուբ գետը:**

1) Բելոռուս
2) Մոլդովա
3) Սլովակիա
4) Գերմանիա

12 **Ո՞րը ՌԴ սև մետաղաձուլական բազա *չէ*.**

1) Մոսկովյան
2) Կենտրոնական
3) Ուրալյան
4) Սիբիրյան

13 **Ո՞ր ազգի ներկայացուցիչներն են ամենաքիչը ներգաղթել Գերմանիա վերջին տասնամյակներին:**

1) իտալացիներ
2) լեհեր
3) ռումինացիներ

4) շվեդներ

14 **Ո՞ր երկիրն ունի չափազանց մեծ կախվածություն օտարերկյա ներդրումներից։**

1) Իսլանդիա
2) Նորվեգիա
3) Ֆինլանդիա
4) Էստոնիա

15 **Ո՞րը Հայկական հրաբխային բարձրավանդակի մաս *չէ*.**

1) Հյուսիսային
2) Արևելյան
3) Կենտրոնական
4) Հարավային

16 **Քանի՞ կմ է ՀՀ ամենաերկար ձգվածությունը։**

1) 360 կմ
2) 370 կմ
3) 380 կմ
4) 390 կմ

17 **Ցարական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանում ո՞ր վարչական միավորը *չկար։***

1) նահանգներ
2) գավառներ
3) մարզեր
4) ոստիկանական տեղամասեր

18 **Ընտրել ՀՀ բնական ռեսուրսների և հանքավայրերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

ա. պղնձամոլիբդենային	1. Մեղրաձոր
բ. ոսկի	2. Թեղուտ
գ. նեֆելինային սիենիտ	3. Սվարանց
դ. երկաթ	4. Շվանիձոր

1) ա–2, բ–1, գ–4, դ–3
2) ա–2, բ–4, գ–1, դ–3
3) ա–3, բ–4, գ–1, դ–2
4) ա–3, բ–1, գ–4, դ–2

19 **Ո՞ր լեռներից եկած լավաներով է ծածկվել Լոռու գոգավորությունը.**

1) Փամբակի
2) Բազումի

3) Ջավախքի
4) Գուգարաց

20 **ՀՀ տարածքում տարվա ընթացքում օդային հոսանքների ո՞ր հոսքն է տիրապետում:**

1) հյուսիսային
2) արևելյան
3) արևմտյան
4) հարավային

21 **ՀՀ-ում ջրօգտագործմանը վերաբերող պնդումներից ո՞րն է առջարկվող լուծում համարվում.**

1) Ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում կորուստների և նորմատիվների բացակայություն
2) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի օպերատիվ մոնիթորինգի համակարգի բացակայություն
3) Ջրի չհաշվառված ծախսերի բարձր շեմ, անխնա ջրօգտագործում
4) Հոսակորուստների և ջրի չհաշվառված ծախսերի կրճատմանն ուղղված մեթոդական ուղեցույցների մշակում

22 **ՀՀ տարածքի քանի՞ տոկոսն է ընդգրկում սելավների և ջրհեղեղների ազդեցության գոտին:**

1) 30%
2) 40%
3) 50%
4) 60%

23 **ՀՀ բնակչության արտագաղթի վերաբերյալ պնդումներից ո՞րը բացասական հետևանք *չէ:***

1) մարդկային կապիտալի արտահոսք
2) երկիրը զրկվում է տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից
3) մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները
4) մեղմանում է գործազրկությունը

24 **ՀՀ ո՞ր մարզում է գտնվում ամենահզոր արևային ֆոտովոլտային կայանը:**

1) Արագածոտն
2) Սյունիք
3) Գեղարքունիք
4) Կոտայք

25 **Ո՞ր հանքավայրի շահագործման ծրագիրն է դադարեցվել՝ արժանանալով հայաստանյան հասարակական և մասնագիտական շրջանակների սուր քննադատությանը՝ կապված բնապահպանական հնարավոր շատ բացասական հետևանքների հետ։**

1) Ամուլսարի
2) Թեղուտի
3) Ախթալայի
4) Ագարակի

26 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի մեքենաշինության ո՞ր ճյուղը գլխավորներից *չէր։***

1) էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
2) ռոբոտների արտադրություն
3) ավտոմատացման համակարգերի արտադրություն
4) ռադիոէլեկտրոնային արդյունաբերություն

27 **ԽՍՀՄ ժամանակաշրջանում Հայաստանի ո՞ր քաղաքում կար սինթետիկ կորունդների արտադրություն։**

1) Երևան
2) Վանաձոր
3) Եղեգնաձոր
4) Վաղարշապատ

28 **Նշվածներից ո՞ր պարարտանյութը ՀՀ օրգանական գյուղատնտեսությանը բնորոշ *չէ*.**

1) գոմաղբ
2) կենսահումուս
3) թռչնաղբ
4) ազոտական պարարտանյութ

29 **Բնության և հասարակության բաղադրիչների տեղաբաշխումը, դրանց միջև առկա տարածական կապերը և օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունը կոչվում է.**

1) երկրաբանություն
2) աշխարհագրություն
3) պատմություն
4) քաղաքագիտություն

30 **Ո՞րը քարտեզների դասակարգման սկզբունք չէ՞.**

1) ըստ մասշտաբի
2) ըստ բովանդակության
3) ըստ նշանակության
4) ըստ ընդհանրացման

31 **Ո՞րն աշխարհագրական թաղանթի գլխավոր հատկանիշ չէ.**

1) գոտիականություն
2) զոնայականություն
3) մակընթացություն
4) ամբողջականություն

32 **Ո՞ր մայրցամաքն է ամենամեծը.**

1) Պանգեյա
2) Գոնդվանա
3) Եվրասիա
4) Լավրասիա

33 **Ո՞րն է մայրցամաքային ծանծաղուտի ամենաստորին խորությունը.**

1) 100 մ
2) 200 մ
3) 300 մ
4) 400 մ

34 **Ընտրել «մարզ — մարզկենտրոն» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. Սյունիք	ա. Հրազդան
2. Շիրակ	բ. Կապան
3. Արարատ	գ. Արտաշատ
4. Կոտայք	դ. Գյումրի

1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Դ տառով.**

1) Ֆոլկլենդյան
2) Պերուական
3) Բենգելյան
4) Կալիֆոռնիական

36 **Քարտեզ 1-ում ո՞ր ծովային հոսանքն է նշված Գ տառով.**

1) Գվինեական
2) Կուրոսիո

3) Գվիանական
4) Մոզամբիկի

քարտեզ 2



37 **Քարտեզ 2-ում ո՞ր լեռնաշղթան է նշված Ա տառով.**

1) Մեղրու
2) Մռավի
3) Ուրծի
4) Վայքի

38 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով.**

1) Արագածոտն
2) Կոտայք

3) Արմավիր
4) Շիրակ

39 **Ո՞րը Համաշխարհային տնտեսության փուլ չէ.**

1) ագրարային
2) հետագրարային
3) արդյունաբերական
4) հետարդյունաբերական

40 **Ո՞րը Հարավային կոնի երկիր չէ.**

1) Արգենտինա
2) Պարագվայ
3) Մադագասկար
4) Բրազիլիա

41 **Ո՞րը արդյունաբերության տարածքային կազմակերպման ձև չէ.**

1) արդյունաբերական կետ
2) արդյունաբերական կենտրոն
3) արդյունաբերական հանգույց
4) արդյունաբերական երկրամաս

42 **Ո՞ր երկիրը երկաթաքար չի արտահանում.**

1) Ավստրալիա
2) Ճապոնիա
3) Հնդկաստան
4) Բրազիլիա

43 **Ո՞ր կլիմայական գոտին ունի ագրոկլիմայական շատ ցածր ներուժ.**

1) արևադարձային
2) մերձարևադարձային
3) բարեխառն
4) մերձարկտիկական

44 **Ո՞ր ը կապի տեսակ չէ.**

1) հեռապատճենային
2) հեռախոս
3) խողովակաշարային
4) ռադիո

45 **Ո՞ր ծառայությունն է արտադրական տեսակի.**

1) լիզինգ
2) առևտուր

3) կապ
4) մշակույթ

46 **Ո՞ր ը ինքնատիպ տարածաշրջան *չէ*.**

1) ծովային
2) համաաշխարհագրական
3) լեռնային
4) քաղաքակրթական

47 **Ո՞ր երկիրը *չի* համարվում նոր արդյունաբերական.**

1) Թայվան
2) Սինգապուր
3) Հոնկոնգ
4) Լյուքսեմբուրգ

48 **Ըստ բնույթի ինչպիսի՞ համամոլորակային հիմնախնդիր *չկա*.**

1) համընդհանուր քաղաքական
2) բնատնտեսական
3) սոցիալական
4) կապի

49 **Ո՞րը էկոլոգիական հավասարակշռության խախտման անմիջական հետևանք *չէ*.**

1) էկոլոգիական լարվածություն
2) էկոլոգիական ճգնաժամ
3) էկոլոգիական անվտանգություն
4) էկոլոգիական աղետ

50 **Ըստ հաշվարկների որքա՞ն կբավարարեն ածխի պաշարները մարդկությանը։**

1) 600 տարի
2) 500 տարի
3) 400 տարի
4) 300 տարի

51 **Ո՞րը «ժողովրդագրական պայթյունի» անմիջական հետևանք *չէ*.**

1) ժողովրդի բարեկեցության ցածր մակարդակ
2) գործազրկության աճ
3) սոցիալական հակասությունների սրում
4) մահացության աճ

52 **Ո՞րը մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչ *չէ*.**

1) կենսամակարդակ
2) երկարակեցություն
3) քաղաքականություն
4) կրթվածություն

53 **Ո՞րը աշխարհագրական մտածողության հատկանիշ չէ.**

1) տարածականություն
2) ռիթմիկություն
3) համալիրություն
4) կոնկրետություն

54 **Ո՞ր մեթոդի միջոցով է հայտնաբերվել օդի ջերմաստիճանի վերընթաց փոփոխության օրինաչափությունը:**

1) քարտեզագրական
2) նկարագրական
3) համեմատական
4) վիճակագրական

55 **ԱՏՀ-ում ո՞ր համակարգն է թույլ տալիս ծրագրային բաղադրիչների օգնությամբ բազաներից ընտրված տվյալների հիման վրա ստեղծել բոլորովին նոր քարտեզ.**

1) պատկերների մշակման
2) քարտեզների արտացոլման
3) աշխարհագրական վերլուծության
4) տվյալների բազայի կառավարման

56 **Գրել հրաբխային ծագման ապարների համարները.**

1) կրաքար
2) բազալտ
3) քարածուխ
4) մարմար
5) քարաղ
6) կավ
7) գրանիտ
8) տուֆ

57 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքի մեծությամբ համարվում են գերխոշոր.**

1) Իրան
2) Գերմանիա
3) Կանադա
4) Ռուսաստան
5) Ավստրալիա
6) Ուկրաինա
7) Ճապոնիա
8) Չինաստան

58 **Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով համարվում են հսկա.**

1) Չինաստան
2) Բելոռուս
3) Իրաք
4) Հնդկաստան
5) Վրաստան
6) Ինդոնեզիա
7) Լիբանան
8) Ֆրանսիա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Ֆրանսիա
2) Դանիա
3) Բելգիա
4) Ուկրաինա
5) Քուվեյթ
6) Նորվեգիա
7) Բրազիլիա
8) Շվեդիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է երեխաների բաժինը.**

1) Հնդկաստան
2) Իսլանդիա
3) Գերմանիա
4) Աֆղանստան
5) Շվեդիա
6) Նիգերիա
7) Պակիստան
8) Նորվեգիա

61 **Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության մեծ մասը դավանում է մահմեդականություն.**

1) Ճապոնիա
2) Իտալիա
3) Արգենտինա
4) Ինդոնեզիա
5) Իրան
6) Վենեսուելա
7) Պորտուգալիա
8) Սիրիա

62 **Տրված օվկիանոսների համարները դասավորել ըստ դրանց տարածքի մակերեսի նվազման կարգով.**

1) Խաղաղ
2) Ատլանտյան
3) Հնդկական

63 **Տրված լճերի համարները դասավորել ըստ նրանց բացարձակ բարձրության նվազման կարգով.**

1) Տիտիկակա
2) Սևան
3) Կասպից

64 Գետի միջին ծախսը 22 մ³/վ է: Որոշել գետի հոսքը 1 ժամում:

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ.ե.40˚-ի վրա է, մյուսը՝ արմ.ե.70˚-ի: **Որոշել քաղաքների միջև ամենակարճ հեռավորությունը:**

66 Երկրի մակերեսը կազմում է 200 000 կմ²: Որքա՞ն մակերես կզբաղեցնի այն 1 : 2000 000 քարտեզում:

67 Երկրի բնակչության թիվը 80 000 է, բնական աճի գործակիցը՝ 25‰: Տարվա ընթացքում ներգաղթել են 1800 մարդ, իսկ արտագաղթել՝ 2700 մարդ: Որոշել երկրի բնակչության թիվը 1 տարի հետո:

68 Երկրում քաղաքաբնակների բացարձակ թիվը 6 մլն. է, երկրի բնակչության թիվը՝ 8 մլն. է: Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը:

69 **Աշխարհագրության կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Որպես աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ աշխարհագրությունը մտնում է բնական գիտությունների, իսկ որպես մարդոլորտի հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ հասարակական գիտությունների համակարգի մեջ։
2) Հասարակական աշխարհագրական գիտություններն ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի ոլորտներում տեղի ունեցող բնական երևույթները։
3) Բնական աշխարհագրության կազմում առանձնահատուկ կարևոր տեղ ունի բնակչության աշխարհագրությունը, քանի որ նրա ուսումնասիրության առարկան սերտորեն կապված է բնական միջավայրի հետ։
4) Ընդհանուր աշխարհագրությունն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական և թե՛ հասարակական երևույթների տարածքային փոփոխությունների համար։
5) Բնական աշխարհագրության ճյուղային գիտություններից են երկրաձևաբանությունը, կլիմայագիտությունը և հողերի աշխարհագրությունը։
6) Հնէաշխարհագրությունը, լանդշաֆտագիտությունը, մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը համալիր գիտություններ են հասարակական աշխարհագրության կազմում։

70 **Ազիմուտի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հյուսիսային ազիմուտը 0° կամ 360° է։
2) Արևմուտքի ազիմուտը 90° է։
3) Հարավի ազիմուտը 180° է։
4) 105° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է։
5) 95° ազիմուտը հորիզոնի հյուսիսարևելյան կողմում է։
6) 115° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է։